ՍՈՎԵՏԱՊԱՇՏ ԴԻՄԱԿԻ ՏԱԿ ՀԱԿԱՍՈՎԵՏ ԴԻՐՔ

Գրեց՝ Ե. Փ. Մ.

Համաշխարհային ռէակցայի կուռքը. Ֆաշիզմը վերջնականապէս ջախջախուեց. Նրան իր մահացու հարուածների տակ տապալեց աշխարհի առաջին սոցիալիստական երկրի 28 ամեայ հերոսական Կարմիր Բանակը: Այս երկու պարագաներին թեթեւօրէն նայել չի կարելի: Դա պատմական տրիպողականութիւնն է, դա կեանքի դիալեկտիկան է, որը պէտք է իրագործուէր այնպէս ինչպէս առանց մազաչափ շեղման իրագործուել է արդէն: Սրանով 2—րդ անգամն է, որ համայն աշխարհի բռնատախնդիր հետադէմները դիտեցին թէ ինչպէս գերման իմպերիալիզմը չկարողանալով այլեւս իր փտած հասարակակարգի քայքայումը կանխել, ստիպուած է լինում դիմել այսպիսի աշխարհաւեր միջոցների իր վերահաս մահը մի քանի տարով ուշացնելու համար:

Հինը, իր ժամանակը անցածը՝ պէտք է ոչնչանայ,եւ նրան իր հարուածների տակ ոչնչացնողը հնի ընդերքում ծնունդ առած Նորն է, Երիտասարդը: Ահա այն իրականութիւնը, որը ամեն տեղ և ամէն պարագայում փաստում է իր ճշմարիտ և արդարացի լինելը:

Հազիւ հիտլերեան «Նոր կարգերը» վանդուած որևէ երկրի սահմաններից մենք լսեցինք այնտեղի ժողովրդական, ազատասիրական շարժումների մասին: Այդ նրա արդիւնքն է, որ այսօր Եւրոպայի ժողովուրդները աննախընթաց պարզութեամբ են դիտում և քննում դէպքերը: Նրանք անխնայ կերպով ժողովրդական դատարանի առաջ են քաշում այս պատերազմի մեղսակիցներին:

Փէթաններ, Լաւալներ, Ֆրանկօներ և հազարաւոր ուրիշները: Նրանք խելահեղ պայքարով մաքրում են իրենց ճամբան և քայլում առաջ դէպի իսկական դէմոկրատիայ, դէպի կատարեալ ազատութիւն:

«Մահ բոլոր նրանց, ովքեր գործակցել են ֆաշիզմին» ահա ազատատենչ ժողովրդների ամենամեծ, ամենաառաջնակարգ նշանաբաններից և ամենասուրբ պարտականութիւններից մէկը:

Այս պատերազմի կարևոր արդիւնքներից մէկն էր և այն, որ պատռեցին բոլոր դիմակները և երևաց այդ դիմակաւորների իսկական կերպարանքը, նրանց հոգին: Եւ ահա այդպիսով ազատութեան մարտիկները հնարաւորութիւն ունեցան պարզորոշ ճանաչելու իրենց թշնամիներին: Ֆաշիզմի նախնական և «կայծակնային» յաջողութիւնները Եւրոպայում և յատկապէս նրա առաջխաղացումը դէպի Սովետական Միութեան խորքերը արբեցրել էր համաշխարհային ռէակցիային և նրա մանկլաւիկներին: Արդեօ՞ք կը գտնուի մի ժողովուրդ, որը այդ շրջանում տուած չլինի դաւաճան, կարճամիտ, ներկայացուցիչներ:

Ո՛չ, չկայ և չ՛էր էլ կարող չլինել:

Հայ ժողովուրդը ևս բոլոր միւսների նման ունեցաւ որոշ թւով հայրենավաճառ դաւաճաններ:

Եւ ահա դաշնակցական Դրօն և ընկերութիւնը, որոնք Բեռլինում կազմակերպեցին ազգային խորհուրդ և Կովկասեան ճակատ ուղարկեցին մի բանակ Դրօի հրամանատարութեամբ «Հայաստանը բոլշևիկներից ազատելու համար»: Վերջինս էլ միշտ հաւատարիմ իր ճշմարիտ կուսակցական անցեալին և իր «հայրենասիրական վսեմ գաղափարներին» կողոպտեց գրաւուած շրջաններում հայ եկեղեցիները, թալանեց իր ազգի սրբութիւնները և այդպիսով կատարեց իր սեպուհ պարտականութիւնը, երբէք չը դաւաճանելով իր դաւաճան կոչմանը: 1)

Սպասւում էր, որ սփիւռքի հայութիւնը մէկ մարդու պէս դուրս կը գայ բողոքելու այդ հայրենավաճառների արարքի դէմ և կը պատրաստէր ժողովրդական դատի յանձնելու նրանց:

Բայց ինչպէս տեսանք սփիւռքում ևս բացառութիւններ գտնւեցին. Դրօի հաւատարիմ ընկերները ոչ միայն չը դատապարտեցին նրան, այլ յարձակւեցին նրան դատապարտող Աւետիք Իսահակեանի վրայ: Արդեօ՞ք կարելի է այդ անհատների ֆաշիստ լինելու համար աւելի հիմնական փաստ գտնել:

Անդրադառնանք մեր իրականութեան:

«Վերածնունդ»ում լոյս տեսած փաստերը այդ հայրենավաճառների նկատմամբ շշմեցուցիչ էին: Բայց ցաւօք սրտի այդ փաստերը ևս չկարողացան սթափեցնել լեռադէմ դաշնակցականներին: «Ալիք»ը միանգամայն ընդմիշտ լռեց այդ խնդրի վերաբերեալ. իսկ նրա շուրջ հաւաքւածները աշխատում են ամեն կերպ քաւել այդ դաւաճանների մեղքերը: Ոմանք այդ նկարները համարում են շինծու. սա այն աստիճան երեխայական պատճառաբանութիւն է, որը յատուկ է միայն մեղքի պահուն բռնւած և շփոթութեան մատնւած ոճրագործներին: Ոմանք էլ արդարացնում են Դրօին որպէս հետատես անհատի, որը ցանկացել է ապահովել հայ ժողովրդի և Հայաստանի Խաղաղութիւնը և ազատութիւնը: Թէ ի՞նչ աստիճան արդարացի է այս պատճառաբանութիւնը եկեղեցիները կողոպտողի նկատմամբ այդ թողնենք: Մենք միայն հարցնում ենք «Ալիք»ից և ընդհանրապէս Դրօին պաշտպանող դաշնակցականներից. ի՞նչ էք կարծում դուք պարոններ, մի ժողովուրդ, որը Կարմիր Բանակի շարքերում փայլեց իր հերոսներով, որը տուեց Թամանեան հերոսական դիվիզիան կկարողանար երբևիցէ յօժարութեամբ կրել Դրօների հրամցրած ֆաշիստ մանկապանների լուծը. Մի՞թէ հայը յանուն իր ազատութեան չէր մարտիրոսանալ այնպէս, ինչպէս այդ արեց յոյնը: Մի՞թէ հայը չ՛էր ծառանայ այդ գազանների և նրանց համագործակիցների դէմ այնպէս, ինչպէս ծառացաւ չեխը: Մի՞թէ հայը կը կրէր ստրկութեան այդ գարշելի լուծը, որը չը կարողացաւ կրել ֆրանսացին: Եւ մի՞թէ հայը այդ բոլորը չարեց:

Պարոն դաշնակցականներ, դուք որ ձեզ համարում էք ամենաճշմարիտ հայը! պէտք է լաւ գիտենաք, որ հայ ժողովրդի նկատմամբ այդ մատնութիւնն անգամ, որը ուզում է ցեխ տրորել մեր փառապանծ պատմութեան լուսեղ էջերին, որը ուզում է հային ներկայացնել որպէս ստորաքարշ, դաւաճանութիւն է համարւում: Չենք ժխտում, ինչպէս բոլորը նմանապէս և հայերը ծնել են այդպիսի ստոր զաւակներ, բայց դրանք միայն Դրօներն են և նրանց արդարացնողները:

Ահա սա է այն ամենաաղաղակող փաստը, որը գալիս է ապացուցելու, որ «Ալիք»ը և նրա շուրջ խմբւած կազմակերպութիւնը այսօրւայ իրենց շինծու սովետապաշտ դիմակի ներքոյ թաքցրել են իրենց հակասովետ դէմքը: «Ալիք»-ի շուրջ խմբւած դաշնակցականներ, եթէ դուք կարծում էք, որ ձեր թերթի էջերում տպագրած մի քանի յօդւածները սովետահայ արւեստագէտների մասին և այդ թերթի միջոցով հանգանակւած մի քանի հազար թումանը կը կարողանայ փոշի փչել գիտակից անհատների աչքին շատ էք սխալւում:

Դուք վերում յիշած մի քանի յօդւածների կողքին լոյս էք ընծայել և այնպիսիները, որոնցով ցանկացել էք հաւատացնել, որ «Կարսի ու Արդահանի խնդրի» մեղաւորը ոչ թէ դուք էք, այլ Սովետական Միութիւնը և Լենինը: Դուք ուզում էք փաստել, որ Սովետական Հայաստանը հանրապետական Հայաստանի «շարունակութիւնն է»: Դուք ձեր թերթում յայտարարում էք, որ հայ ժողովուրդը մինչև այսօր չի տեսել լի աչքով արևի ծագումը: 2) Դուք ասում էք որ հայը մինչև այսօր կեղեքւել է բոլորից—բոլորից բացի ինքն իրենից: 3) Եւ քանի—քանի այսպիսի մեղադրող ու խայտառակ փաստեր:

Բաւական չէ՞ արդեօք այս բոլորը պարզելու համար ձեր պրովոկատոր դիրքը փաստելու համար ձեր հակասովետ ընթացքը:

Եթէ դուք, պարոններ, յաւակնութիւն ունէք ձեր ճշմարիտ լինելուն, եթէ դուք հաւատացած էք այն բոլորին ինչ գրել էք Խորհրդարանի պատգամաւոր Արտաշէս Յովհաննիսեանի արդարացի կոչին որպէս պատասխան: Եթէ դուք որպէս կուսակցականներ ամենաչնչին քաղաքացիական քաջութիւնից զուրկ չէք. և վերջապէս եթէ դուք «մարդ» կոչմանը արժանի լինելու համար գէթ ցորենաչափ պատուազգացութիւն ունէք, ապա ուրեմն քաջութիւն ունեցէք դուրս գալու ձեր թերթի էջերում և առանց զանազան ակնարկների, որը յատուկ է միայն պատուազգացութիւնից զուրկ, քաղաքացիական քաջութիւն չունեցող անհատներին, բացարձակօրէն պատասխանելու մեզ:

1. Եթէ դուք Դրօ-ի մեղսակից եւ գաղափարակից ընկերները չէ՞ք, ինչո՞ւ ապա դուրս չեկաք հրապարակ պատռելու այդ ազգային դաւաճանի դիմակը եւ ինչո՞ւ ձեր կենտրոնական կոմիտէն նրան, նրա ընկերներին եւ նրան պաշտպանող կուսակցականներին չը վտարեց իր շարքերից, որպէս ազգային դաւաճանների:

2. Ինչո՞ւ «Ալիք»ը Դաշնակիցների Իրան մտնելուց յետոյ հրապարակաւ չը հրաժարւեց այն յետադէմ ուղղութիւնից, որը նա որդեգրել էր երբ նա հրատարակւում էր այնպիսի անհատների միջոցով, որոնք դաշնակիցների կողմից իրաւացիօրէն ձերբակալւեցին որպէս ֆաշիստներ:

Հարցը դրուած է պարզ և այլևս հնարաւոր չէ որևէ այ- վէպային խաղերով խոյս տալ դրանից ու Դիտերի, Տիգրանեանների միտումնաւոր յօդւածներով ծածկել կեղտերը:

Մենք սպասում ենք ձեր պատասխանին, այլապէս դուք ձեր լռութեամբ կը փաստէք ձեր ֆաշիստ և հակասովետ դիրքը:

---

1) Տես «ՀՃՄիածին» հանդէս թիւ 1. Յունուար 1944 էջ 16.

2 և 3) Օգտուած ակզբի „Ալիք"-ում լոյս տեսած „Ընկերվարական Եւրոպա"՝ յօդւածից:

VERATSNUND | August 19, 1945